



Վահան Թորոսեանց

Տրտմություն

Բոլորն ալ տրտում են և վիրավոր: Չարդված շուշաններու ցողուններեն արյունը կկաթի շիթ առ շիթ, կակաչը տրտմության ձյունին տակ կհեծե, աղավնիները կհեծկլտան, իբր թե անբույն ըլլային, ժպիտները մահվան ստվերներու պես կդողդոջին եղնիկի աչքերուն մեջ, հույսը ծունկի կուգա և կաղոթե:

Տեսա՞ժ եք մենավոր և արտասովոր լույսեր, որոնք ամայի հովիտի մը գնայլագին հեռավորությանը մեջ կսարստան, և անհամբեր կսպասեն վերջալույսի թներուն:

Ծովն է տրտում, ծովն է մռայլ:

Ահավասիկ աղոթքներու սպիտակ երամները, որ կուգան արշալույսներու խորերեն և կվազեն տրտմության սև մեհյանները:

Արևնե՛ր, բոլորն ալ տրտում:

Ահավասիկ համեստության թևավոր և սպիտակ դիցուհիներ, որոնք կվազեն դողդոջ և երկյուղալից երկու անեզրություններու երկար եզերքներուն վրա. խավարը և լույսը:

Տրտում են անմեղությունները և վիրավորված չարության և ցուփության դաշույններեն: Կաթիլ մ'արյուն կհյնա անոնց վերքերեն Թեմիսի աչքերուն մեջ, և անոնց չքերեն ճողոպրած ճառագայթ մը կմխվի խավարին կուրծքը և երկու մասի կբաժնե:

Խավարն ալ վիրավոր է, զարնված լույս են:

Ահարկու է խավարին ողբը, որ կկոհակավորվի սիջոցին սեջ:

1922 թ